ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N7

ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

Ք. Սևան 13.04.2018թ.
Ժամը 12:30

Հանձնաժողովի նախագահ՝ Մարի Սիմոնյան

Անդամներ՝ Խաչիկ Կիրակոսյան

Վարդուհի Վարդանյան

Ռոմելա Հարությունյան

Մարիանա Առաքելյան

Գնումները համակարգող՝ Լանա Դավթյան

ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/6 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին
(Մ. Սիմոնյան)

1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին:
2. Ընտրված մասնակից հայտարարելու մասին:
3. <<Եվա և Սյուզի>> ՍՊԸ-ի տվյալները լիազորված մարմին ներկայացնելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին.
(Մ. Սիմոնյան)

1.1 Նկատի ունենալով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 06.04.2018թ.-ի եզրակացության համաձայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով սույն ընթացակարգի 8-րդ, 16-րդ և 33-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված <<**Եվա և Սյուզի**>> **ՍՊԸ-ն** ունեցել է 114010 դրամ ժամկետանց պարտավորություն, որը գերազանցում էր <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի

1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը հանձնաժողովի 07.04.2018թ.-ի թիվ 6 որոշմամբ <<**Եվա և Սյուզի**>> **ՍՊԸ-ի** հայտը մերժվել էր և առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացնելու պահանջ էր ներկայացվել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ <<**Կառոլ**>> **ՍՊԸ-ին,** <<**Գարդմեն**>> **ՍՊԸ-ին և** <<**Մակրո Ֆուդ**>> **ՍՊԸ-ին:**

1.2 <<**Կառոլ**>> **ՍՊԸ-ն,** <<**Գարդմեն**>> **ՍՊԸ-ն և** <<**Մակրո Ֆուդ**>> **ՍՊԸ-ն** հայտով նախատեսված ապրանքների ամբողջական նկարագիրը ներկայացրել են հրավերով սահմանված ժամկետում և կարգով:

1.3 <<**Կառոլ**>> **ՍՊԸ-ի,** <<**Գարդմեն**>> **ՍՊԸ-ի և** <<**Մակրո Ֆուդ**>> **ՍՊԸ-ի** կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը /Հավելված 6.1/ համապատասխանում է սույն հրավերի պահանջներին:

1.4 Հանձնաժողովի 28.03.2018թ.-ի թիվ 4 որոշմամբ ընթացակարգի մնացած մյուս չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվությունը գնահատվել էր սույն հրավերի պահանջներին համապատասխան:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Ընտրված մասնակից հայտարարելու մասին.
(Մ. Սիմոնյան)

2.1 Ելնելով վերոգրյալից հանձնաժողովը որոշեց ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել՝

<<**ՖՈՏՈՆ**>> **ՍՊԸ-ին**-3-րդ,5-րդ,11-րդ, 22-րդ չափաբաժիններով
<<**Դեագա**>> **ՍՊԸ-ին** -23-րդ,24-րդ,32-րդ չափաբաժիններով
<<**Ցիկլոիդ**>> **ՍՊԸ-ին** -6-րդ,7-րդ չափաբաժիններով
<<**Պիրամիդա Կվինտ**>> **ՍՊԸ-ին** -37-րդ չափաբաժնով
Շուշանիկ Ավագյան Ա/Ձ-ին -19-րդ չափաբաժնով
<<**Մակրո Ֆուդ**>> **ՍՊԸ-ին** -4-րդ,8-րդ, 10-րդ,17-րդ,18-րդ,20-րդ,25-րդ,39-րդ,40-րդ չափաբաժիններով
<<**ԳԱՐԴՄԵՆ**>> **ՍՊԸ-ին** -1-ին,12-րդ,26-րդ,27-րդ,28-րդ,29-րդ,30-րդ,31-րդ,33-րդ, 34-րդ,35-րդ,36-րդ,38-րդ չափաբաժիններով
Վիկտորյա Սամվելյան Ա/Ձ-ին -21-րդ չափաբաժնով
<<**Արմեն-Համիկ եղբայրներ**>> **ՀՁ ՍՊԸ-ին** -2-րդ,9-րդ չափաբաժիններով
<<**ԿԱՌՈԼ**>> **ՍՊԸ-ին** -13-րդ,14-րդ,15-րդ, և 16-րդ չափաբաժիններով

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. <<Եվա և Սյուզի>> ՍՊԸ-ի տվյալները լիազորված մարմին ներկայացնելու մասին.
(Մ. Սիմոնյան)

3.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 45-րդ կետով սահմանված ժամկետում <<**Եվա և Սյուզի**>> **ՍՊԸ-ն** հանձնաժողովին է ներկայացրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 20 բաժնի կողմից 10.04.2018թ.-ին տրված N 2245 տեղեկանքը, համաձայն որի <<Եվա և Սյուզի>> ՍՊԸ-ն 26.03.2018թ-ի դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն չունի:

3.2 Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 45-րդ կետով հանձնաժողովը որոշեց <<**Եվա և Սյուզի**>> **ՍՊԸ-ի** տվյալները լիազորված մարմին չներկայացնել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Սիմոնյան

Անդամներ՝ Խ. Կիրակոսյան

Վ. Վարդանյան

Ռ. Հարությունյան

Մ. Առաքելյան

Գնումների համակարգող՝ Լ. Դավթյան